


## ԷՂԻԿ ԱՐՏԵՍԻ ԶՈՅՐԱԲՅԱՆ



Լրացավ անվանի պատմաբան, վաստակաշատ մանկավարժ Էղիկ Արտեսի Զոհրաբյանի ծննդյան 70-ամյակը:

Ծնվել է ՀՀ Կապանի շրջանի Բաղաբուրջ գյուղում 1939 թ. մայիսի 5-ին ծառայողի ընտանիքում: 1956 թ. ավարտելով Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի լեռնամետալուրգիական տեխնիկումը, որն ավարտելուց հետո (1959 թ.) գորակոչվել է խորհրդային բանակ: Ավարտելով ծառայությունը՝ 1962 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ: Որպես ուսման գերազանցիկ ստացել է Հ. Մանանդյանի անվան կրթաթոշակ: 1967 թ. գերազանցությամբ ավարտել է պատմության ֆակուլտետը և ընդունվել ասպիրանտուրա:

1968 թ. աշխատանքի է անցել ԵՊՀ ԽՄԿԿ պատմության ամբիոնում որպես ասիստենտ. 1973 թ. պաշտպանել է թեկնածուական, 1987

թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1974 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1988 թ.՝ պրոֆեսորի կոչում:

1993 թ. ընտրվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նորաբաց ամբիոնի վարիչ, իսկ 1998 թ. ստանձնել դարձյալ նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը: Թե՛ մեկի և թե՛ մյուսի ստեղծման ու կայացման գործում անուրանալի է պրոֆ. Էղ Զոհրաբյանի վաստակը: 2008 թ. հունիսին նորից ընտրվել է միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ:

Պրոֆեսոր Էղ. Զոհրաբյանը հայ դիվանագիտության պատմության ճանաչված մասնագետ է և ակնառու ձեռքբերումներ ունի հայոց նորագույն շրջանի, հատկապես 1918-1922 թթ., ամենաբարդ ու խճճված հիմնահարցերի գիտական մշակման և լուսաբանման գործում, ինչին նվիրված են նրա թե՛ թեկնածուական, թե՛ դոկտորական ատենախոսությունները, և թե ավելի քան 60 գիտական հոդվածներն ու 5 մենագրությունները: Զգնալով տրորված ճանապարհով՝ սկզբից ևեթ զբաղվել է պատմագրության կողմից շրջանցված հիմնահարցերով, ստեղծել գիտական հիմնարար աշխատություններ, որոնք աչքի են ընկնում առաջադրած պրոբլեմների նորովի քննարկումներով և գիտական հետևողականությամբ ու փաստերի մանրագնին վերլուծության վրա խարսխված եզրահանգումներով:

1979 թ. լույս է տեսել Էղ. Զոհ-

րաբյանի առաջին մեծածավալ աշխատությունը՝ *«Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ.»* մենագրությունը, որտեղ հեղինակը հետազոտել և լուսաբանել է ոչ միայն խորհրդային, այլև նախորդ շրջանի հայ-թուրքական հարաբերությունները, մանրամասն վերլուծել Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներն ու դրանց ժամանակ ստորագրված պայմանագրերը, դիվանագիտական այն հսկայական գործունեությունը, որ նախորդել է այդ իրադարձություններին:

Մինչ 1985 թվականը նորագույն ժամանակաշրջանի հայ-իրանական հարաբերությունների մասին մեր պատմագրության մեջ տառացիորեն ոչինչ չկար գրված: Էդ. Չոհրաբյանն առաջինը ուսումնասիրեց դրանք և հրատարակեց իր երկրորդ մեծածավալ աշխատությունը՝ *«Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922 թթ.»*, որն առայժմ միակն է այդ բնագավառում: Նրանում հեղինակը նախ անդրադառնում է Հայաստանի առաջին հանրապետության և Իրանի փոխհարաբերություններին, ներկայացնում դեսպան Հովսեփ Արղությանի գործունեությունը և ապա լուսաբանում այդ տարիներին Խորհրդային Հայաստանի ու Իրանի միջև հաստատված հարաբերությունները, որոնք տեղի են մինչև ԽՍՀՄ կազմավորումը: Գրքում մանրամասն վերլուծված է ինչպես Թեհրանի հայկական դեսպանության, այնպես էլ Թավրիզի հյուպատոսարանի գործունեությունը:

1987 թ. Էդ. Չոհրաբյանը հրատարակեց *«Եվրոպական երկրների հետ Սովետական Հայաստանի առևտրատնտեսական առնչությունների պատմությունից 1920-1922 թթ.»* ուսումնասիրությունը (գետնելված է «Հայաստանում սովետական իշխա-

նության ամրապնդման պատմության մի քանի հարցեր» ժողովածուում), որտեղ դարձյալ առաջին անգամ լուսաբանվում են Իտալիայի, Շվեյցարիայի, Շվեդիայի, Գերմանիայի և Ֆինլանդիայի հետ Հայաստանի ունեցած առևտրատնտեսական կապերը:

Շարունակելով Հայաստանի միջազգային դրության և արտաքին քաղաքականության վերաբերյալ իր հետազոտությունները՝ 1997թ. Էդ. Չոհրաբյանը հրատարակեց մի նոր մեծածավալ աշխատություն՝ *«1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները»*, որտեղ մանրակրկիտ ներկայացված են ժամանակի ռազմաքաղաքական իրադրությունը տարածաշրջանում, Հայաստանի միջազգային դրությունը և վարած արտաքին քաղաքականությունը, քեմալ-բոլշևիկյան մերձեցումը, թուրք-հայկական պատերազմի ընթացքը, տերությունների ունեցած դիրքորոշումն ու վարած քաղաքականությունը և Հայաստանի Հանրապետության կրած պարտության պատճառները:

Պատմական Հայաստանի Շարուր և Նախիջևան գավառների հայաթափության և Հայաստանից անջատման պատմությունը ևս մեր պատմագրության մեջ մոռացության մատնված հարցերի թվին էլ պատկանում: Սկսած 1988 թ.՝ պրոֆեսոր Էդ. Չոհրաբյանը ձեռնարկեց այդ հիմնահարցի ուսումնասիրությունը և արդեն 2000 թ. հրատարակեց եռամաս մենագրության առաջին, իսկ 2002 թ.՝ երկրորդ գիրքը: Առաջին գրքում (*«Ազգամիջյան կոիվները Երևանի նահանգում 1918 թ.»*) մանրակրկիտ ուսումնասիրված են Ադրբեջանի և Թուրքիայի հրահրանքով ծագած հայ-թաթարական (ադրբեջանական) կոիվները Մուրմալուում, Շարուր-Նախիջևանում և Գողթնում, ցույց է տրված այն ողբերգությունը (ջարդ, տարագրություն), որ բաժին հասավ այդ

գավառների հայ բնակչությանը թուրքական զորքերի՝ Անդրկովկաս կատարած արշավանքի հետևանքով: Երկրորդ գրքում՝ «Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», որ ներառում է 1918 թ. դեկտեմբերից 1920 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածը, վերլուծված են Անտանտի տերությունների (հատկապես Անգլիայի և ԱՄՆ-ի) քաղաքականությունը Նախիջևանի հիմնահարցում, ինչպես նաև Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները, որոնց հետևանքով ավարտին հասցվեցին Շարուր-Նախիջևանի և Գողթնի հայության ջարդն ու բռնագաղթը: Հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ 1918-1919 թթ. թուրք-աղըրքեջանական ուժերի կողմից իրականացված այդ գավառների հայաթափությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն իր բոլոր դրսևորումներով:

Էդ. Չոհրաբյանի աշխատությունների կարևոր արժանիքներից է նաև այն, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում բազմաթիվ նոր փաստեր ու արխիվային վավերագրեր՝ անհրաժեշտ մեկնաբանություններով ու վերլուծու-

թյուններով, գիտական ընդհանրացումներով:

Էդ. Չոհրաբյանը «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի ամենաակտիվ հեղինակներից է. առաջին հոդվածը լույս է ընծայել 1971 թ., և անցած շուրջ քառասուն տարիների ընթացքում հանդեսում հրապարակել է ավելի քան երկու տասնյակ ծանրակշիռ աշխատություն: Էդ. Չոհրաբյանը արդեն մեկ տասնամյակ է նաև հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է և մասնագիտական իր փորձառությամբ լուրջ նպաստ է բերում խմբագրության աշխատանքներին:

«Բանբերի» խմբագրական խորհուրդը և խմբագրակազմը սիրով շնորհավորում են մեծարգո գիտնականին ծննդյան 70-ամյակի և գիտամանկավարժական երկարամյա գործունեության առթիվ, ցանկանում քաջառողջություն և նույնպիսի բեղմնավոր գործունեություն՝ ի շահ հայ պատմագիտության և համալսարանական կրթության:

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԳԵՍԻ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**